



Abb.4 *Sisymbrium officinale* Scop.
 Illustriertes Arzneimittelbuch, XVII Jh.
 Maschtoz Matenadaran, Cod.6594



Abb.5 *Opopanax chironium* Koch.
 Illustriertes Arzneimittelbuch, XVII Jh.
 Maschtoz Matenadaran, Cod.6594

ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ
 (Պատմամշակութային համառոտ ակնարկ)

Պարոյր Սուրադեան

Վրաստանի քրիստոնէացման վաղ շրջանի պատմութիւնը, ինչպէս այլուր, նշանակալիորէն մթազնուած է ետին դարերի աւանդութիւնների նստուածքներով: Ըստ նրանցից մէկի՝ քարոզչութեան մեկնելու երկրները վիճակահանութեամբ որոշելիս Վիրքը (=Իւերիա, Քարթլի) բաժին է ընկնում Աստուածամօրը, սակայն նրա փոխարէն, Տիրոջ կամքով, ուղարկուած է Անդրէաս առաքեալը Սիմոն Կանանացու ուղեկցութեամբ: Պատումը ձեւաւորուել է X դարից ոչ շուտ եւ արձանագրուել XI-XII դդ. վրացական աղբիւրներում (Գէորգ Աթոսացի, Եփրեմ Կրտսեր, Թուխ-Ուրբնիսի ժողովի արձանագրութիւն)¹: Առաքելականութեան ծառայող մէկ այլ աւանդութեամբ Վիրքում քարոզչութիւն է կատարել Ասորիքից եւ Հիւսիսային կողմանք» այցելած Բարթողիմէոս առաքեալը, սակայն դարձի այդ դրուագը հետագայում մոռացուել է, եւ Ս. Նունէ/Նինոն ի նորոյ է երկիրը դարձի բերել²: Սոյն տարբերակի արձագանքը դիտելի է վրացերէն միջնադարեան մի աղօթքում³: Առաքելականութեան տեսութիւնը կոչուած է հիմնաւորելու Եկեղեցու ինքնակայութիւնը (աւտոկեֆալութիւնը)՝ նուիրապետական խնդիրներ արծարծելիս⁴:

«Վրաստան» հասկացութիւնը այսօրուայ ընդգրկմամբ աղբիւրները գիտեն միացեալ թագաւորութեան կազմաւորման շրջանից (XI դ.)⁵: Քրիստոնէացման շրջանում (IV դ.) այն բաժանուած էր երկու մասի՝ Կոլխիդա-Լազիկա-Յայնկոյս (Արեւմտեան) Վրաստան եւ Իւերիա-Վիրք-Քարթլի-Յայնկոյս (Արեւելեան) Վրաստան: Ընդ որում, IV-V դարերում նրան-

ցում իշխած թագաւորական տների ներքին ժամանակագրութիւնը նշանակալի չափով պայմանական է⁶: Յայնկոյս Վրաստանը նոր հաւատքի քարոզչութիւնն ընդունեց Բիւզանդիայից, Քարթլին՝ Պաղեստին-Ասորիք-Հայք արեւելեան ճանապարհով⁷: Մինչեւ 349 կամ 363 թուականը Մեծ Հայքի կազմում գտնուող Գուգարքը (=Ստորին Քարթլին), բնականաբար, Հայքի հետ միաժամանակ, նոյն ձեւով ու նոյն աղբիւրից պիտի ընկալէր նոր ուսմունքը, ուստի Գրիգոր Պարթեւը պիտի ճանաչուէր արեւելավրաց թեւը պիտի ճանաչուէր արեւելավրաց թագաւորութեան լուսաւորիչ, որի հրահանգներն է կատարում, ըստ Խորենացու աւանդման (Բ, ծգ), Հռիփսիմեանց հետ առաքելութեան եկած Նունէն («Գրիգորի վարք», «Գիրք թղթոց», Մ. Խորենացի, Ա. Սափարացի):

Վիրքի դարձը պատմող աղբիւրներից հնագոյնը եւ հաւաստին Պաղեստինեան Կեսարիայի մետրոպոլիտ Գեղասիոսի (367-395 թթ.) գրաւումն է⁸ (նրանից է օգտուում Թուփիսոսը, վերջինից՝ Գեղասիոս Կիւղիկեցին, երկուսից՝ Սոկրատ Սքոլաստիկոսը, Խորենացին եւն): Մետրոպոլիտը ճանաչել է Վիրքի արքայազն Բակուրին եւ արձանագրել նրա աւանդածը, ըստ որի լուսաւորիչը «ոմն գերի կին է»: Մկրտուող արքան որսի ժամանակ խարխափել է խաւարումից, ինչը տեղի է ունեցել Կոստանդինոս Մեծ կայսեր օրօք, որից դարձի եկած թագաւորը քահանայներ է խնդրել: Վրաց-Հայկական աղբիւրներ է խնդրել: Վրաց-Հայկական աղբիւրների համաձայն Վիրքի անդրանիկ քրիստոնեայ թագաւորը Միհրանն է, իսկ ըստ Պետրոս Վրացու (Մայրամեցու) ասորերէն

ՀԱՅԻ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՀԱԻԱՏՔՈՒՄ

Աստղիկ Իսրայելեան

23 Հասանաբար այս շրջանում Վրաց եւ Ադրուանից եկեղեցիները իրենց ինքնակալութիւնը հաստատելու համար մշակում են «առաքելականութեան» սեփական պատում: Ն. Մառի համոզմամբ Վրաց Եկեղեցին աստուկեֆալ դարձաւ VII կիսին (տե՛ս Արա՛ «Из поездки на Афон, СПб., 1894 стр. 20.

24 Կ. Կեկելիձէ, *Կանոնական կառուցումներ...*, էջ 348, հմմտ. նոյնի՝ *К вопросу об иерусалимском происхождении грузинской церкви.* - «Դրուագներ...», հտ. IV, էջ 358-363. **Н. Марр**, *Предварительный отчет о работах на Синае, веденных в сотрудничестве с И. А. Джаваховым, и в Иерусалиме, в поездку 1902 г. (апрель-ноябрь)*, СПб., стр. 12-13..

25 Կ. Կեկելիձէ. Ասորի գործիչների Քարթլի գալու հարցի շուրջ. - «Դրուագներ...», հ. I, Թբ., 1956, էջ 19-50 (վրաց.):

26 Հմմտ. է. **Н. Марр**, *Кавказский культурный мир и Армения*, Ереван, 1995, стр. 214-215. հմմտ. **П. М. Мурадян**, *Армянская эпиграфика Грузии. Картли и Кахети*, Ереван, 1985, стр. 172-174

27 **Л. Մեմարէ**, Վրաց հին դարերի օջախներ, հատ. I, պրակ II, Թբ., 1962: Արտասահմանեան երկրներում գտնուող օջախները ներկայացուած են գրքի II հատորում (1980թ.):

28 Իլիա Աբուլաձէ. Վրաց եւ Հայոց գրական յարաբերութիւններ, IX-Միջ. Ուսումնասիրութիւն եւ բնագրեր, Թբ., 1944, էջ 01-018 (վրաց.):

29 «Վրաց իրաւունքի յուշարձաններ», կազմեց՝ Ի. Դոյիձէ, հատ III, Թբ., 1970, էջ 5-6, 12-13 (վրացերէն):

30 Նշ. աշխ, էջ 106-127:

31 Միս. Գոշ. Թուղթ առ Վրացիս յաղագս ուղղափառութեան հաւատոյ. - «Գանձասար», Զ, Երեւան, 1996, էջ 340-402:

32 **П. М. Мурадян**, *Идея конфессиональной толерантности и межнационального согласия в армянской книжности XII-XIII веков.* "Христианский Восток", новая серия, том 1, стр. 359-373.

33 Պարոյր Մուրադեան. *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, Երեւան, 1977:

34 Նոյն տեղում, էջ 10-12:

35 Պ. Ա. Չոբանեան, *Վրացական ուղեգրութիւնները եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին*, Երեւան, 1981, էջ 9-30:

36 Կ. Կեկելիձէ. *Վրաց գրականութեան պատմութիւն*, հ. I, Թբ., 1960, էջ 372-385 (վրաց.):

Հացը, որով բացատրուում են Քրիստոսի ուսմունքի գլխաւոր գաղափարները, հարուստ բովանդակութիւն ունի նաեւ ժողովրդական հաւատալիքներում: Հնագիտական, ազգագրական, բանահիւսական տուեալների համաձայն այն բազմաթիւ գործառութիւնների հետ մէկտեղ հանդէս էր գալիս որպէս զոհաբերութիւն: Ըստ որում, «Հաց» ասելով, պէտք է հասկանալ հասկը, հացահատիկը, ալիւրը, խմորը, այսինքն՝ հացի բոլոր վիճակները՝ անմշակ-մշակուած, հում-եփած:

Հին երկրագործների ծիսակատարութիւններում հացը զոհաբերուում էր հացի, պտղաբերութեան ոգիներին ու աստուածութիւններին, աղբիւրներին, գետերին, մարդկանց հոգիներին... Զոհաբերուում էին նաեւ հացի ոգուն, որը պատկերացում էր տարբեր կերպարանքներով:

Պտղաբերութեան հետ կապուած ոգիներից գորտի պաշտամունքի որոշ վերապրուկներ, այդ թւում եւ մատաղի արարողութիւնը յարատեւել են մինչեւ 20-րդ դարը ներառեալ:

Զոհաբերութիւնը կատարուում էր թէ՛ իրական գորտին եւ թէ՛ բնական (գորտածեւ քարեր) ու արհեստական արձաններին: Ուխտաւորները աղօթքներով դիմում էին գորտին, նրանից զաւակ էին խնդրում, հիւանդութեան բուժում, ամուսնութիւն, հարստութիւն, խոնաւութիւն, բերքի առատութիւն: XX-րդ դարի սկզբին գորտին նուիրուած զոհաբերութիւն է նկարագրում Ե. Լալայեանը. «Վանի քաղաքամասի Իսկալա կոչուած դռան մօտ... Մի աւագան կայ, որի մէջ ապրում է ...սուրբ եւ անմահ համարուած մի գորտ: Սակաւակաթ կանայք

յատկապէս ցորեն են խաշում եւ բերում, այս աւագանի մէջ ածում, աղօթում եւ ջրիցը իրենց կրծքին քսում: Մեծ ուրախութիւն է պատճառում նրանց, երբ գորտը բարեհաճում է այդ, յատկապէս իւր համար խաշած ցորենն ուտել, դա նշան է համարում, որ ուխտաւորի ուխտը պիտի կատարէ, առատ կաթ պարգեւէ: Ուխտաւորն անշուշտ երեք անգամ պիտի կրկնէ իւր այս զոհաբերութիւնը, երեք անգամ պիտի գայ՝ խաշած ցորենով»:

Ցորենի եւ գորտի իմաստային կապի իրեղէն վկայութիւններ ունեն բրոնզէ-դարեան զարդերը: Ք. ա. 15-րդ դ. այսպէս մի բրոնզէ ձուլածոյ ապարանջան է պահուում Հայաստանի պատմութեան պետական թանգարանում (1436, Ալավերդի)³: Այն եզրերի մօտ հասկ խորհրդանշող նախշ ունի: Կենտրոնում հայելային արտացոլման դիրքով իրար նայող երկու գորտեր են պատկերուած, նրանց միջեւ՝ գալարուող պարոյրներով մի S-աձեւ նախշ: Ապարանջանի մնացած մակերեսը զբաղեցնող պարուրածեւ եօթ նախշերն այնպէս են դասաւորուած, որ, միմեանց շարունակութիւնը կազմելով, կրկին S-աձեւ են դառնում (նկ. 1):

Ուշադրութեան են արժանի նոյն ժամանակաշրջանի կախիկ-պահպանակները (2514, Գետաշէն, Արցախ), որոնք հորիզոնական դիրքում ունեն շերտաւոր ման մարմին, գորտի ուռուցիկ աչքեր, դժանխաշով պայմանաւորուած լայն բացուած բերան, նրա մէջ պարուրածեւ նախշեր, հակառակ ծայրին հասկածեւ հիւսք: Ուղղահայեաց դիրքով սրանք կնոջ իրանով, երկար ծամով էակների են նման (նկ. 2):